# Մարզպետարան դիմած քաղաքացիների դիմումների, բողոքների 2017թ.-ի առաջին կիսամյակի ամփոփագիր

**2017**թ-ի առաջին կիսամյակի ընթացքում ստացվել է **765** դիմում:

**ա**) Դրամական օգնություն է խնդրել **641** քաղաքացի: Բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

**բ**) Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է **25** քաղաքացի, որից 20-ի խնդրանքը բավարարվել է, 2-ինը՝ մերժվել, 3 դիմում ընթացքի մեջ է: (Բնակարանային պահանջի դիմումները մերժվել են մարզպետարանի իրավասությունից դուրս լինելու պատճառով):

**գ**) Առողջապահական բնույթի **44** դիմումից դրական պատասխան է ստացել 43-ը, 1 դիմում ընթացքի մեջ է: Առողջապահական հարցերով դիմած քաղաքացիները մերժվել են պետ. պատվերի և առողջարանային ուղեգրերի սահմանափակ լինելու պատճառով:

**դ**) Աշխատանքի հարցերով դիմած **16** քաղաքացիներից 11-ի պահանջին դրական ընթացք է տրվել, 3 դիմում մերժվել է, 2 դիմում ընթացքի մեջ է (դիմումները մերժվել են աշխատատեղ չլինելու պատճառով):

**ե**) Գյուղատնտեսական հարցերով դիմել են **3** քաղաքացի և ստացել դրական պատասխան:

**զ**) Կրթության և մանկական հիմնարկներին առնչվող հարցերով դիմել են **12** քաղաքացի, բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

**է**) հողաշինության հարցերով դիմած **9** քաղաքացիներից բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

**ը**) Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել են **15** քաղաքացիներ, 15-ն էլ ստացել են դրական պատասխան:

**թ**) Սեփականաշնորհման բնույթի դիմումներ ներկայացրած քաղաքացիներին առաջարկվել է դիմել դատարան:

Փ. Ղազարյան

մարզպետարանի աշխատակազմի

քարտուղարության ընդհանուր բաժնի պետ